

The **RSC BLOG** offers a series of informal publications on various issues of relevance, in both English and Armenian.

Unlike our peer-reviewed publications, RSC Blog entries are shorter, less academic and more opinion-oriented, aimed at offering a “rapid response” analytical assessment of timely events and developments.

RSC BLOG

No. 7 | 8 February 2016

ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ, ԱԹԱԹՈՒՐՔԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՇԱՐՖՈՒՄԸ Հայկակ Արշամյան

Վերջերս հայ օգտատերերից մեկը Ֆեյսբուք սոցիալական ցանցում (Facebook) բախվել էր մի խնդրի, երբ կարծիք էր գրել այն մասին, որ «Քեմալ Աթաթուրքը նույնպես մեղավոր է եղել Հայոց ցեղասպանության մեջ»: Ֆեյսբուքի ադմինիստրացիան նամակ է ուղարկել օգտատիրոջը, որով հայտնել է, որ հանել է օգտատիրոջ վերը մեջբերված հրապարակումը, քանի այն չարաշահում է ցանցի «Խախտումների չափորոշիչների» (Abuse standards violations) կամ վարքականոնի «Համացանցի պրոտոկոլային հասցեների արգելափակման և միջազգային համապատասխանության» ենթաբաժնի կետերը (IP blocks and international compliance): Իհարկե, Ֆեյսբուքյան ադմինիստրացիայի այս պատճառաբանությունն առաջին հայացքից տարօրինակ է, ուստի անհրաժեշտ է հասկանալ թե ի՞նչ կապ կա Աթաթուրքի վերաբերյալ հրապարակումների հեռացման ու Ֆեյսբուքի վարքականոնի խախտման միջև (վարքականոնի ամբողջական տեքստն այստեղ՝ <http://www.rawstory.com/wp-content/uploads/2012/02/facebookcensorshiprules.jpg>):

Abuse Standards Violations

All the items below should be confirmed; anything not on this list can be unconfirmed

Sex and Nudity

- Any **OBVIOUS** sexual activity, even if naked parts are hidden from view by hands, clothes or other objects. Cartoons/art included. Foreplay allowed (Kissing, groping, etc.) even for same sex (man-man/woman-woman)
- Naked 'private parts' including female nipple bulges and naked butt cracks; male nipples are ok.
- Pixelated or black-barred content showing nudity or sexual activity as above.
- Naked children, including cartoon versions (able to stand on their own) and older minors - **Escalate if unsure of sexual context (child porn)**
- Depiction of sexual assault or rape in any form.
- Mothers breastfeeding without clothes on.
- Escalate** bestiality, necrophilia, and pedophilia. Confirm cartoon/digital versions **BUT escalate** if content is promoting.
- Digital/cartoon nudity. Art nudity ok.
- People "using the bathroom".
- Blatant (obvious) depiction of camel toes and moose knuckles.
- Sex toys or other objects, but only in the context of sexual activity.
- Depicting sexual fetishes in any form.

Illegal Drug Use

- Unconfirm all marijuana unless context is clear that the poster is selling/buying/growing.
- Illegal drugs shown **NOT** in the context of medical, academic or scientific study.
- Note:** Any depiction of marijuana alone (any amount) or implements used for smoking marijuana are ok (unconfirm)

Theft Vandalism and Fraud

- Praising or displaying crimes that they or their friends committed
- Organizing criminal activity or soliciting illegal services.
- Encouraging others to engage in criminal activity.
- Escalate** based on credibility assessment

Hate Content (Valid Name Match not required)

- Slurs or racial comments of any kind
- Attacking based on protected category
- Hate symbols, either out of context or in the context of hate phrases or support of hate groups.
- Showing support for organizations and people primarily known for violence. Depicting symbols primarily known for hate and violence, unless comments are clearly against them.
- "Versus photos" or "Vs photos": photos comparing two people side by side.
- Any** photoshopped images of people, whether negative, positive or neutral
- Images of drunk and unconscious people, or sleeping people with things drawn on their faces.
- Videos: Street/bar/schoolyard fights even if no valid name match is found. **School fight videos are only confirmed if the video has been posted to continue tormenting the person targeted in the video.**

Notes:

- Hate symbols are confirmed if there's no context **OR** if hate phrases are used
- Humor overrules hate speech **UNLESS** slur words are present or the humor is not evident.

Graphic Content

- Content showing Poster's delight in/involvement in/promoting of/encouraging of violence against humans or animals for sadistic purposes (e.g. torture, staged animal fights, animal starvation, obvious neglect, etc.)
- Depicting the mutilation of people or animals, or decapitated, dismembered, charred, or burning humans.
- Poaching of animals should be confirmed. Poaching of endangered animals should be **escalated**
- Urine, feces, vomit, semen, pus, and ear wax. (Cartoon feces, urine and spit are OK; real and cartoon snot is OK)
- Violent speech (Example: "I love hearing skulls crack")
- Photos and digital images showing internal organs, bone, muscle, tendons, etc. Deep flesh wounds are ok to show; excessive blood is ok to show.
- Crushed heads, limbs, etc are ok as long as no insides are showing
- Note:** No exception for news or awareness related content.

IP Blocks and International Compliance

Escalated:

- Holocaust denial which focuses on hate speech
- All attacks on Ataturk (visual and text)
- Maps of Kurdistan (Turkey)
- Burning Turkish flag(s)

Confirmed (unless clearly against PKK and/or Ocalan):

- PKK support and depiction
- Abdullah "Apo" Ocalan-related content

Self Harm

- Note:** All self harm content should be **escalated**.

- Threat and serious promotion of suicide.
- Supporting people, groups, and symbols that advocates and promoting eating disorders as a lifestyle choice.
- Depicting self-mutilation and groups and people that promote and support it (ex: cutting groups)

Bullying and Harassment

- Valid name matches no matter what the content is (negative, positive or neutral)
- Contacting other users persistently without prior solicitation or continue to do so when the other party has said that they want no other further contact with the sender.
- Attacking anyone based on their status as a sexual assault or rape victim.

Credible Threats (Escalate as per credibility assessment)

- Credible threats or incitement of physical harm against anyone
- Credible indications of organizing acts of present or future violence
- Any threats of violence against Heads of State (HOS) or Law Enforcement Officers (LEO) should always be **escalated** even if not credible
- Any credible indication of terrorist activity or organized past/future crime.



Իրականում, ներքին օգտագործման այս վարքականոնը գաղտնագրկվել է Gawker.com կայքում դեռևս 2012 թվականին: Կայքն այս այս փաստաթուղթը ստացել է Ֆեյսբուքի կողմից վարձած ընկերության մի աշխատակցից, որի պարտականությունն է եղել ցանցի բովանդակության մոդերացումը, այն է՝ հետևել ու քննել այդ սոցիալական ցանցում ստեղծվող բովանդակությանը:¹

Վարքականոնի՝ «Պրոտոկոլային հասցեների արգելափակման և միջազգային համապատասխանության» ենթաբաժինը ներառում է հետևյալ կետերը՝

Տարածված՝

1. Հոլոքոսթի մերժում, որը հիմնվում է ատելության խոսքի վրա
2. Աթաթուրքին ուղղված հարձակումներ (տեքստային և վիզուալ)
3. Զրդստանի քարտեզներ (Թուրքիա)
4. Թուրքիայի դրոշի/ների այրում

Հաստատված (բացի ուղղակիորեն Զրդական բանվորական կուսակցության և/կամ Օջալանի դեմ ուղղվածներից)՝

1. ԶԲԿ աջակցություն և նկարագրություն
2. Աբդուլլահ «Ափո» Օջալանի վերաբերյալ բովանդակություն

Ատելության խոսքի վրա հիմնված Հոլոքոսթի մերժման դրույթն իհարկե տրամաբանական է, որ ներառված է Ֆեյսբուքյան վարքականոնի խախտումների ցանկում: Այն նաև տեղավորվում է «միջազգային համապատասխանություն» կետի տակ: Այստեղ միակ հարցը, որ կարելի է քննարկել, այն է, թե ինչո՞ւ են բացակայում մարդկության կողմից ճանաչված մյուս ցեղասպանությունների դեպքերի նկարագրությունը: Արդյո՞ք սա կանխակալ վերաբերմունքի արդյունք չէ Մարկ Ցուկենբերգի թիմի կողմից:

Մակայն հաջորդ կետերն արդեն ոչ միայն վիճահարույց են, այլև լուրջ մտահոգությունների տեղիք են տալիս: Աթաթուրքին ուղղված հարձակումներին վերաբերող կետի հետ կապված մի քանի հարցադրում է ծագում: Առաջին հերթին, ինչպե՞ս է այս կետը տեղ գտել Ֆեյսբուքյան վարքականոնում՝ ուղղակի այդ ցանցի ղեկավարության որոշման արդյունքում, թե՞ օգտատերերի պահանջով, և կամ թե՞ Թուրքիայի Հանրապետության անմիջական միջնորդությամբ: Այստեղից բխում է հաջորդ կարևոր հարցը, այն է՝ ինչո՞ւ են բացակայում նմանատիպ կետերը, որ կվերաբերեն օրինակ՝ Լեհիին, Ստալինին, կամ թեկուզ Զադաֆիին ու Մաոյին: Չէ՞ որ սույն գործիչներին ու նրանց գաղափարներին աջակցող մարդկանց հսկայական բանակ կա ոչ միայն այդ երկրներում, այլև ամբողջ աշխարհում: Ու շատ հնարավոր է, որ հիշյալ գործիչների դեմ գրված ստատուսները նույնպես արժանացել են օգտատերերի քննադատությանը և բողոքներ են ուղարկվել Ֆեյսբուքի ղեկավարությանը: Ավելին, այսօր ՌԳ նախագահ Պուտինի դեմ լինում են բազմաթիվ հրապարակումներ, հատկապես՝ ուկրաինական սոցիալական ցանցերում ու բլոգներում, որոնք լայնորեն տարածվում են Ֆեյսբուքում: Արդյո՞ք Ֆեյսբուքի ղեկավարությունը կհամաձայնվի դրանք դուրս մղել իր սոցիալական ցանցից, եթե մի քանի միլիոն օգտատեր բողոքի դրանց դեմ, կամ եթե ՌԳ իշխանությունները պաշտոնապես փորձեն միջամտել այս խնդրին: Վերջապես, կարելի է բերել նաև Ջորջ Վաշինգթոնի ու Բենջամին Ֆրանկլինի օրինակները: Չէ՞ որ նրանք մեծ ներդրում ունեն ամերիկյան պետության հիմնադրման գործում, ուստի կարելի է նրանց դեմ ցանկացած բովանդակություն նույնպես պետք է համարել խախտում և ներառել խախտումների ցանկում:

Նույն հարցադրումները կարելի է անել կապված Զրդստանի այն քարտեզներին, որոնք գծված են այսօրվա Թուրքիայի տարածքի վրա, ինչպես նաև՝ Թուրքիայի դրոշի այրելու ակցիաների վերաբերյալ: Աշխարհում տարբեր անհատների, գիտնականների, շարժումների կամ պետությունների կողմից գծվում են տարատեսակ քարտեզներ, որոնք չեն համապատասխանում արդի աշխարհաքաղաքական ստատուս-քվոյին ու միջազգայնորեն ճանաչված սահմաններին: Օրինակ կարելի է բերել Աբխազիայի, Հարավային Օսեթիայի, Լեռնային Ղարաբաղի նորագույն քարտեզները, որոնք ստեղծվում ու տարածվում են բոլոր սոցիալական ցանցերով ու մեդիաներով: Զրդերն էլ ունեն իրենց պատկերացումները ապագայի վերաբերյալ ու նույնիսկ չեն էլ թաքցնում, որ հավակնում են ստեղծել իրենց պետականությունը, որը ներառելու է նաև Թուրքիայի Հանրապետության հարավ-

¹ տես՝ <http://stream.aljazeera.com/story/201308240040-0023000>

արևելյան շրջանները: Սա գուտ քաղաքական հարց է, իսկ Ֆեյսբուքը ազատ տարածք է օգտատերերի համար, ովքեր հնարավորություն ունեն տարածելու ու կիսելու իրենց գաղափարները, բնականաբար՝ առանց ատելության խոսքի և հայհոյանքի: Ինչ վերաբերում է Թուրքիայի դրոշի այրելուն, ապա աշխարհում այսօր այրվում են բազմաթիվ երկրների դրոշներ, որոնց մասին վիզուալ կադրերը ազատ տարածվում են ոչ միայն համացանցում, այլև ՉԼՄ-ներում: Ինչո՞ւ կարելի է տարածել ենթադրենք ԱՄՆ կամ Իսրայելի դրոշի այրման փաստը, բայց չի կարելի դա անել թուրքական դրոշի պարագայում: Դրոշի այրումը քաղաքական ակցիայի տեսակ է, ինչպես օրինակ որևէ անընդունելի քաղաքական գործչի խրտվիլակի այրումը: Ֆեյսբուքյան ադմինիստրացիան ինչո՞ւ պետք է այդքան մտահոգվի հատկապես թուրքական դրոշի այրման պարագայում:

Վերջապես մյուս արգելափակումները վերաբերում են Օջալանին ու Քրդական բանվորական կուսակցությանը նկարագրող ու աջակցող բովանդակությանը: Ըստ վարքականոնի, կարելի է ստեղծել ու տարածել Օջալանի ու ՔԲԿ դեմ բովանդակություն, սակայն հակառակն անելն արգելվում է: Նույն տրամաբանությամբ, ինչո՞ւ Ֆեյսբուքը չի արգելափակում օրինակ Սիրիայի ընդիմությանը վերաբերող բովանդակությունը, կամ՝ ցանկացած այլ երկրում գործող ընդիմադիր ուժերին գործունեությունը նկարագրող վիզուալ և տեքստային բովանդակությունը:

Թուրքական իշխանությունները, ըստ մի շարք աղբյուրների, բացահայտ խոսել են Ֆեյսբուքի հետ իրենց համագործակցության մասին դեռևս 2013 թվականին հունիսի վերջին, երբ Թուրքիայի կապի նախարար Բինալի Յըլդըմը հայտարարել էր, որ «Ֆեյսբուքը երկարատև հարմոնիկ համագործակցություն ունի» իշխանությունների հետ:² Ընդ որում, Ֆեյսբուքի կողմից Թուրքիայում ապրող օգտատերերի հաշիվները սկսել է արգելափակվել հիմնականում 2013 թվականի մայիսից՝ կապված Ստամբուլում գտնվող Գեզի այգու պահպանման համար սկսված պայքարի հետ: Ընդ որում, հետաքրքիր է, որ Թվիթերի ղեկավարությունն այդ նույն ժամանակ հրաժարվել է համագործակցել և արգելափակել Թուրքիայի կողմից գրաքննվող բովանդակությունը: Ընդ որում, Ֆեյսբուքի կողմից Թուրքիայում ապրող օգտատերերի հաշիվները սկսել է արգելափակվել հիմնականում 2013 թվականի մայիսից՝ կապված Ստամբուլում գտնվող Գեզի այգու պահպանման համար սկսված պայքարի հետ: Ընդ որում, հետաքրքիր է, որ Թվիթերի ղեկավարությունն այդ նույն ժամանակ հրաժարվել է համագործակցել և արգելափակել Թուրքիայի կողմից գրաքննվող բովանդակությունը:

Նույն, 2013թ. ամռանը Change.org կայքի միջոցով բողոք-նամակ է հղվել Ֆեյսբուքի ղեկավար Մարկ Յուկենբերգին, պահանջով՝ դադարեցնել քրդական բովանդակության գրաքննությունը ցանցում և հարգել խոսքի ազատության իրավունքը:³ Սակայն, հիշյալ պահանջը մնացել է անարձագանք:

Քննելով վերոհիշյալ բոլոր փաստերը, ակնհայտ է դառնում, որ ֆեյսբուքյան ցանցի ղեկավարությունը բացահայտ համագործակցության մեջ է թուրքական իշխանությունների հետ, կամ առնվազն վարում է պրոթուրքական քաղաքականություն, դրանով խախտելով Թուրքիայում ապրող միլիոնավոր քաղաքացիների ազատություններն ու իրավունքները: Մնում է միայն եզրակացնել, որ այստեղ միախառնված են տնտեսական ու քաղաքական տարրեր շահեր, որոնք էլ ստիպել են Ֆեյսբուքի ղեկավարությանը գնալ նմանատիպ քայլերի, այն է՝ Թուրքիայի քաղաքացիների ազատ խոսքի իրավունքի խախտման հաշվին պաշտպանել թուրքական պետության ու գործող իշխանությունների իրավունքներն ու շահերը:

² տես՝ www.gagrulenet/facebook-censorship-against-turkeys-kurds-continues/, <http://kurdishrights.org/2013/11/13/how-turkey-uses-facebook-to-repress-kurds/>, and www.kurdishinfo.com/facebook-censorship-against-kurds-continues
³ տես՝ www.change.org/p/mark-zuckerberg-ceo-of-facebook-stop-censoring-kurdish-content-on-facebook